ԴՎԻՆԻ ՎԱՂՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՄՈՆՈՒՄԵՆՏԱԼ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐ

Ա. Ա. ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ, Կ. Կ. ՂԱՖԱԴԱՐՅԱՆ

Հայկական վաղմիջնադարյան ճարտարապետության ուսումնասիրության գործում առանձնահատուկ նշանակություն են ձեռք բերում Դվինի պաշտամունքային և աշխարհիկ մոնումենտալ կառույցները։ Դվինը Հայաստանի վարչական, տնտեսական և մշակութային խոշոր կենտրոններից էր, միջնադարյան հայ ճարտարապետության ձևավորման կարևորագույն օջախներից մեկը։ Այս առումով առաջնահերթ խնդիր է պարզել և որոշակի հստակություն մտցնել քաղաքի ճարտարապետական հուշարձանների թվագրության հարցերում, որին մեծապես նպաստում է շինությունների հնագիտական մանրաղնին քննությունը՝ գրավոր աղբյուրների տվյալների համադրությամբ։

Դվինի ճարտարապետական մոնումենտալ հուշարձանները բավականին լավ են ուսումնասիրված, և գիտական լայն շրջանառության մեջ են մտցրել Կարո Ղաֆադարյանը, Վարազդատ Հարությունյանը, Նիկոլայ Տոկարսկին և այլոք[1]։ Սակայն հուշարձանների թվագրման վերաբերյալ դեռևս կան չբացահայտված հարցեր, որոնք աստիճանաբար լրացվում են քաղաքի հնագիտական նոր ուսումնասիրություններին զուգահեռ։ Մեր նպատակից դուրս է տալ Դվինի ողջ ճարտարապետության վերլուծությունը և գնահատականը, որը կատարել են նախորդ ուսումնասիրողները։ Ներկայացված հոդվածով աշխատել ենք նոր նյութերի հիման վրա որոշ ժամանակագրական ճշտումներ կատարել Դվինի կարևորագույն հուշարձանների՝ Կաթողիկե տաճարի ու միանավ եկեղեցու և պալատական երեք շինությունների վերաբերյալ։

Դվինի Կաթողիկե եկեղեցին *վաղ միջնադարյան այն բացառիկ հուշարձաններից է, որտեղ նկատվում են հատակագծային և ծավալատարածական բոլոր փոփոխությունները՝ կատարված նրա գոյության ողջ ընթացքում։ Իր նախնական տեսքով այն մի հսկա եռանավ բազիլիկ է՝ ամենամեծը նմանատիպ կառույցների մեջ (աղ. I, 1)։ Դվինի եռանավ տաճարը կառուցվել է ըստ երևույթին IV դարի երկրորդ կեսին կամ V դարի սկզբներին և հասակակից է Երերույքի, Տեկորի, Քասաղի բազիլիկներին։ Այդ կառույցի հեթանոսական տաճար լինելու մասին ենթադրությունը[2] առայժմ չի հաստատվում։ Ավելին՝ շերտագրական մանրազնին քննությունը ցույց է տալիս, որ տաճարը կառուցվել է IV դարի 30-ական թթ.՝ քաղաքի հիմնադրումից հետո։ Եռանավ բազիլիկը շարված է սպիտակ ավազաքարով, որի տաշվածքից առաջացած թափոնը լցվել է եկեղեցու շրջակայքը։ Անմիջապես այդ շերտի տակ բացվում են հելլենիստական շրջանի դամբարանադաշտը և բնակավայրի մնացորդները[3], որը ավերվել է մ. թ. 59 թ. Կորբուլոնի արշավանքների*

---

1 Կ. Ղաֆադարյան. Դվին քաղաքը և նրա պեղումները. 1, Երևան, 1952, II, Երևան, 1982։ Վ. Հարությունյան. Դվինի V—VII դդ. ճարտարապետական հուշարձանները. Երևան, 1950։ Н. М. Токарский. Архитектура Армении IV—XIV вв. Ереван, 1961; О. Х. Халпахчьян. Гражданское зодчество Армении. М., 1971 և ուրիշներ։

2 Թորոս Թորամանյան. Նյութեր հայկական ճարտարապետության պատմության. Ա, Երևան, 1942, էջ 214։ Կ. Ղաֆադարյան. նշվ. աշխ., I, էջ 90—95։

3 Г. Г. Кочарян. Двин в античную эпоху. Автореф. канд. дисс, Ереван, 1984, с. 6—7.

ժամանակ։ Հետևաբար, Դվինի միջնաբերդում և նրան հարող տարածքում մոտ երեք դար բնակություն չի եղել[4]։ Այսպիսով, եկեղեցին չէր կարող կառուցվել հեթանոսական մեհյանի տեղում, որի մնացորդները իսպառ բացակայում են։

Դվինի բազիլիկ տաճարը սկզբնապես ունեցել է փայտե ծածկ։ Դրասխանակերտցու վկայությունը այն մասին, որ նախկին եկեղեցին շինված է եղել աղյուսով և փայտով («...զի յառաջ յաղիւսոյ և ի փայտէ կազմեալ է նա...»), խիստ կասկածելի է. թերևս դա վերաբերում է միայն փայտե ծածկին, որի առկայությունը Հայաստանի վաղ քրիստոնեական կառույցներում ակնհայտ է[6]։ Տաճարի պահպանության ներկա վիճակով դժվար է որոշել, թե երբ է փայտե ծածկը փոխարինվել քարաշեն թաղով։ Անհավանական չէ, որ 470-ական թթ. թաղակապ ծածկն արդեն գոյություն է ունեցել։

Պետք է ասել, որ Դվինի բազիլիկ տաճարի կառուցմանը ժամանակակից պատմիչները, ընդհանրապես, չունեն ոչ մի վկայություն նրա վերաբերյալ, իսկ հետագա հեղինակների մոտ կան շատ սուղ հիշատակություններ տաճարի կառուցման մասին՝ կապված Դվինում կրակապաշտական ատրուշանի հիմնադրման և այն Վարդան Մամիկոնյանի կողմից ավերելու և տեղում եկեղեցի կառուցելու փաստի հետ։ Այդ վկայությունները ժամանակավրեպ են և հավանաբար շփոթություն կա նաև պատմական անձնավորությունների ներկայացման մեջ[7]։ Դվինում ատրուշան կառուցելու և եկեղեցի քանդելու փաստը հաստատ արձանագրված է 572 թ. ապստամբության ժամանակ[8]։ Անհավանական է, որ 450-ական թթ., երբ երկիրը օրհասական պայքար էր մղում պարսկական նվաճողների դեմ, որոնք բարոյական և ֆիզիկական բնաջնջման եզրին էին կանգնեցրել երկիրը, հիմք դրվեր մի այդպիսի մեծ կառույցի։

485 թ., երբ Հայաստանի մարզպան է կարգվում Վահան Մամիկոնյանը, Ղազար Փարպեցու վկայությամբ, որն ականատես էր այդ արարողությանը, Դվինի կաթողիկե եկեղեցին արդեն ուներ արտաքին սյունասրահ («...լնուին արտաքոյ սրահք եկեղեցւոյն...»)[9]։ Արդ, ե՞րբ կարող էին կատարվել այդ մեծ փոփոխությունները, որոնք նկատելի են եռանավ տաճարի հատակագծում։ Դա կարող էր տեղի ունենալ միայն այն ժամանակ, երբ երկիրը ապրում էր համեմատաբար խաղաղ շրջան, և, մյուս կողմից, Վաղարշապատից Դվին էր տեղափոխվել հոգևոր կենտրոնը, այսինքն՝ V դարի 60—70-ական թթ.։ Այս շրջանում է, որ տեղի է ունենում բազիլիկ տաճարի առաջին հիմնական վերակառուցումը։ Այս պատկերը հստակորեն բացահայտվել

---

4 Ա. Ա. Քալանթարյան. Դվինի նյութական մշակույթը IV—VIII դդ., Երևան, 1970, էջ 10։

5 Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտեցւոյ Պատմութիւն Հայոց. Թիֆլիս, 1912, էջ 71։

6 Ակնարկ հայ ճարտարապետության պատմության. Երևան, 1964, էջ 94; Н. М. Токарский. Указ. соч., с. 73.

7 Դրասխանակերտցի, էջ 59։ Թովմայի Վարդապետի Արծրունւոյ Պատմութիւն տանն Արծրունեաց. Թիֆլիս, 1917, էջ 136—138։ Մեծին Վարդանայ Բարձրբերդցւոյ Պատմութիւն Տիեզերական, ի լոյս ընծայեաց Մկրտիչ Էմին. Մոսկվա, 1861, էջ 65։

8 Պատմութիւն Սեբէոսի, աշխատասիրութեամբ Գ. Վ. Արդարեանի. Երևան, 1979, էջ 67։ Ժամանակագրութիւն տեառն Միքայելի Ասորւոյ Պատրիարքի. Երուսաղեմ, 1871, էջ 260, 264։ Մեհյանի կառուցման և ապստամբության մասին վկայում են նաև Հովհան Եփեսացին (տե՛ս Ասորական աղբյուրներ. Երևան, 1976, էջ 388—389) և IX դարի վրաց պատմիչ Արսեն Սափարացին (տե՛ս Լ. Մելիքսեթ-Բեկ. Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին. հ. Ա, Երևան, 1934, էջ 41—42)։

9 Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց. Թիֆլիս, 1904, էջ 178։

է 1946—1951 թթ. պեղումների ժամանակ[10]։ Նռանավ բազիլիկը կրել է հետևյալ փոփոխությունները (աղ. I, 2)։

1. Հյուսիսային, հարավային և արևմտյան կողմերից կառուցվել է արտաքին սյունասրահ։

2. Ավագ խորանի հարավային և հյուսիսային կողմերից կառուցվել են ավանդատներ։

3. Փորր չափով բարձրացվել է հատակը և զարդարվել խճանկարով։



Աղ. 1

Բացառված չէ, որ վերանորոգվել է նաև կղմինդրե ծածկը, որի մնացորդները գտնվել են նույն ժամանակ հիմնադրված կաթողիկոսական պալատի հատակի տակ, և այլ հատվածներ։

Ավարտուն այս տեսքով տաճարը կանգուն էր մինչև 572 թ., երբ պարսիկները այն քանդեցին[11] «ի պատասխան հայ ապստամբների գործողու-

10 Կ. Ղաֆադարյան. Նշվ. աշխ., I, էջ 97—98։

11 Սեբեոս, էջ 68։

թյունների։ VII դարի սկզբներին, Ամբատ մարզպանի օրոք, ձեռնարկվում է Կաթողիկե եկեղեցու երկրորդ հիմնովին վերանորոգությունը («...և ինքն արկանէ հիմն եկեղեցւոյն սրբոյ կոփածոյ քարամբք գեղեցկադիր շինուածիւ՝ կրով ձուլեալ ի մի...»[12], «Ապա սկսան արկանել հիմն եկեղեցւոյ...»[13], որի ժամանակ տաճարը հատակագծում մեծ փոփոխություններ է կրում և վերածվում է խաչաձև հատակագծով կենտրոնագմբեթ եկեղեցու (աղ. I, 3)։ Արևելյան կողմից բավական կրճատվում է եկեղեցու երկարությունը, կառուցվում է նոր ավագ խորան կողմնային ավանդատներով։ Վերանում է տաճարի արտաքին սյունասրահը, որի փոխարեն հարավային և հյուսիսային կողմերում կառուցվում են ելուստավորված կողմնային աբսիդներ, կառուցվում է չորս հաստահեղույս մույթերի վրա հենվող մեծ գմբեթը։ Բարձրացվում է հատակը, որն իր տակ է վերցնում հին խճանկարը։ 1907 թ. խ. Դադյանի պեղումների ժամանակ ավագ խորանի հյուսիսային ավանդատան մեջ բացվում է մի նոր խճանկար՝ Տիրամոր պատկերով, որն անշուշտ VII դարի ստեղծագործություն է[14]։ Վերակառուցվում է նաև եկեղեցու կղմինդրապատածածկը։ Եկեղեցու վերականգնման ժամանակ սպիտակ ավազաքարին փոխարինում է տուֆը։ Ողջ եկեղեցին արտաքուստ հարուստ հարդարվում է և զոտկվում արձանագրությամբ, որի առանձին հատվածները գտնվել են պեղումների ժամանակ։ Եկեղեցին ունեցել է մեծ ջահեր, որոնց ապակե զամբարների հարյուրավոր բեկորներ գտնվել են շրջակա տարածքում[15]։

Կաթողիկե եկեղեցու այս վերջին նորոգության ժամանակաշրջանը շատ որոշակի է և փաստարկված է պատմիչների վկայություններով։ Այն ընդգրկում է 607/8—618/19 թթ.[16]։

Դվինի Կաթողիկե եկեղեցու վերաբերյալ վերջին վկայությունը կապվում է 894 թ. երկրաշարժի հետ, որը մեծ ավերածություններ է կատարում Արարատյան դաշտում, հատկապես՝ Դվինում։ Եկեղեցին երկրաշարժից հիմնովին ավերվում է և այլևս չի վերականգնվում։

Դվինի մյուս հիշարժան պաշտամունքային հուշարձանը միանավ եկեղեցին է, որը գտնվում է Կաթողիկեի հյուսիսային կողմում (աղ. I, 4)։ Վերջինս հաստահեղույս պատերով թաղածածկ մի շինություն է (24,5×10,65×1,9—2,2 մ), թաղակիր երեք կամարով, որոնց համապատասխան պահպանվել են երեք զույգ որմնամույթեր։ Աբսիդի հյուսիսային մասում բացվել են ավանդատան հետքեր։ Միանավ եկեղեցին իր հատակագծով և կոնստրուկտիվ առանձնահատկություններով Հայաստանի նման կառույցների դասական օրինակներից է։ Այն բազմիցս ներկայացվել է հրատարակություններում և նրա ճարտարապետական ձևերի վերաբերյալ մասնագետների շրջանում ոչ մի տարաձայնություն չկա։ Սակայն հուշարձանի թվագրության հարցում ուսումնասիրողների կարծիքները բաժանվում են։ Նրանց մի մասը միանավ եկեղեցու հիմնադրումը կապում են Ցիզտրուզիտի մարտիրոսության հետ, և այն վերագրում են 554—555 թթ.[17]։ Այս թվագրումը կապվում է Հովհ. Դրասխանակերտցու հետաքրքիր մի վկայության հետ, որի համաձայն Ցիզտրուզիտի մարմինը «...եդին մերձ ի սուրբ եկեղեցին կաթողիկոսարանի յարևելից կողմանէ, շինեալ ի վերայ վկայարան սուրբ կոփածոյ քարամբք»[18]։

---

12 Դրասխանակերտցի, էջ 71։

13 Սեբեոս, էջ 100։

14 Ա. Քալանթարյան. Դվինի նյութական մշակույթը..., աղ. XLII։

15 Հ. Մ. Ջանփոլադյան. Դվինի միջնադարյան ապակին IX—VIII դդ. Երևան, 1974, էջ 16, աղ. X—XI։ Ա. Ա. Քալանթարյան. Դվին, I. Երևան, 1976, էջ 102—104։

16 Կ. Ղաֆադարյան. նշվ. աշխ., I, էջ 99—100։

17 Վ. Հարությունյան. նշվ. աշխ., էջ 80—81։ Կ. Ղաֆադարյան. նշվ. աշխ., I, էջ 106—109։

18 Դրասխանակերտցի, էջ 64։

Այստեղ խոսքը Կաթողիկե եկեղեցու մասին է և ոչ թե կաթողիկոսարանի, ինչպես հասկացվել է այս դեպքում։ Այս կապակցությամբ Ս. Մնացականյանը մի կարևոր ճշտում է արել, ըստ որի «եկեղեցի կաթողիկոսարանի» և «սուն կաթողիկոսարանի» հասկացությունները պարզաբանվել են[19]։ Բացի այդ, Կաթողիկե եկեղեցու հյուսիսային կողմում կառուցված պալատը VI դարի կեսերին դեռևս գոյություն չուներ. այն, ինչպես կնկատենք ստորև, կառուցվել է VII դարի սկզբներին, Կաթողիկեի վերջին վերանորոգման շրջանում։ Հետևաբար, Ցիզտրուզիտի վկայարանը չէր կարող լինել այդ հատվածում և առնչվել միանավ եկեղեցու հետ։

Կաթողիկե եկեղեցու հարավ-արևելյան անկյունում բացվել են կոփածո սուֆ բարերով շարված փոքր շինության հիմնապատեր, որոնք, հնարավոր է, կարող են պատկանել հիշյալ վկայարանին։

Դվինի միանավ տաճարը սերտորեն առնչվում է վաղքրիստոնեական նմանատիպ պաշտամունքային կառույցների հետ և չի կարող թվագրվել ավելի ուշ շրջանով։ Թվում է, որ բազիլիկը կառուցվել է V դարի վերջում և VI դարի սկզբներին և առնչվում է մարզպան Վահան Մամիկոնյանի շինարարական ծավալուն գործունեության հետ։ Այդ մասին հիշատակում են պատմիչները[20]։

Հովհաննես Դրասխանակերտցին Դվինում հիշատակում է մի այլ եկեղեցի ևս, որը կառուցել է Ներսես Տայեցին իր կաթողիկոսության առաջին տարիներին, արաբների կողմից հրդեհված վկայարանի տեղում[21]։ Դա Ս. Սարգիս եկեղեցին է, որի մասին հիշատակում են նաև հետագայի հայ պատմիչները և վրաց ժամանակագիրները[22]։ Խաչիկ վարդապետ Դադյանի հաշվետվության մեջ 1907 թ. Դվինում իր պեղած հուշարձանների թվում հիշատակվում է նաև այդ եկեղեցին[23]։ Սակայն հետագայում, ո՛չ Յ. Ստրժիգովսկին (1913 թ.) և ո՛չ էլ Դվինի արշավախմբի մասնակիցները (1937 թ.) չեն կարողացել ճշտել այդ եկեղեցու տեղը։ Խ. Դադյանի պեղումներից մեզ են հասել երկու խոյակ, իսկ հետագայում՝ մեկ կամարաղեղ, որոնք իրենց մոտիկ նմանություններն ունեն Զվարթնոցի նյութերում։ Կասկածի տակ առնելով Դադյանի կողմից այդ եկեղեցու պեղման փաստը, պահպանված մանրամասներից (հատկապես Զվարթնոցատիպ կամարաղեղի առկայությունից) կարելի է ենթադրել, որ Ս. Սարգիս եկեղեցին ունեցել է կլոր հատակագծով հորինվածք։ Ամենայն հավանականությամբ Ս. Սարգիս եկեղեցին կառուցվել է 640—641 թթ. անմիջապես Դվինը արաբների կողմից առաջին անգամ գրավվելուց հետո, քանի որ այստեղ են ամփոփվել քաղաքի գրավման ժամանակ նահատակված բնակիչների աճյունները։ Բացառված չէ, որ այդ եկեղեցու կառուցողական որոշ սկզբունքներ կարող են փոխառված լինել Զվարթնոցի տաճարի կառուցման ժամանակ։

Դվինի պաշտամունքային հուշարձանների մեջ առանձնակի նշանակություն է ձեռք բերում միջնաբերդի գագաթում տեղադրված բազիլիկ շինությունը (աղ. II, 1), որը մինչև այժմ մասնագիտական գրականության մեջ հայտնի էր «Արշակունյաց գահանիստ դահլիճ» անունով։ Այս դահլիճը պատմաճարտարապետական մանրազնին քննության է ենթարկել Կարո Ղաֆա-

---

19 Ս. Խ. Մնացականյան. Դվինի պալատի կառուցման ժամանակի մասին.—«Պատմա-բանասիրական հանդես», 1974, № 2, էջ 213—232։

20 Ղազար Փարպեցի, էջ 158։ Սեբեոս, էջ 67։ Դրասխանակերտցի, էջ 61։

21 Դրասխանակերտցի, էջ 83։

22 Սամուէլի քահանայի Անեցւոյ Հավաքմունք ի գրոց Պատմագրաց. Վաղարշապատ, 1893, էջ 83։ Կիրակոս Գանձակեցի. Պատմութիւն Հայոց, աշխատասիրությամբ Կ. Ա. Մելիք-Օհանջանյանի. Երևան, 1961, էջ 60։ Վարդան Բարձրաբերդցի, էջ 93։ Միքայել Ասորի, էջ 64։ Տե՛ս նաև Լ. Մելիքսեթ-Բեկ. նշվ. աշխ., էջ 114, 116։

23 «Արարատ» ամսագիր, 1907, էջ 659։

դարյանը, որն այն համարել է Խոսրով II Կոտակ թագավորի շինարարական գործունեության արգասիք (IV դարի 30-ական թթ.)[24]։ Դահլիճը ուղղանկյուն մեծ սրահ է (28,9×12,5), չորս զույգ սյուներով, որոնցից տեղում պահպանվել է միայն մեկի խարիսխը։ Նա իր ձևով կրկնում է Կաթողիկե եկե-







Աղ. II

ղեցու վաղագույն կառույցի որմնախարիսխներից մեկին։ Պահպանվել են սրահի հիմնապատերը՝ շարված ճեղքված սպիտակ ավազաքարով և կավե շաղախով։ Լավ է պահպանվել կրաշաղախ հատակը, որի կենտրոնում հստակ ուրվագծվում է կիսաշրջան հատակագծով ամբիոնի կամ գահավորակի հետքը (նկ. 1)։

24 Կ. Ղաֆադարյան. նշվ. աշխ., II, էջ 89—96։

1985 թ. կատարել են դահլիճի նոր ու մանրազնին ուսումնասիրություն, որի ժամանակ պարզվել են շատ մանրամասներ՝ կապված նրա ֆունկցիոնալ դերի, ներքին ծավալատարածական հորինվածքի, շինարվեստի, ժամանակագրության և այլ հարցերի հետ։ Պեղումների արդյունքը հետևյալն է.



Նկ. 1

ա) Բացվել են դահլիճի ութ խարիսխներից վեցի հիմքերը, որոնք շարվել են նախորդ շրջանում ավերված մոնումենտալ շինությունների սրբատաշ քարերով։ Դրանց վրա նկատելի են ներկի հետքեր և շաղախի մնացորդներ։

բ) Սրահի նախկին վերակազմության (աղ. II, 2, ճարտ. Դր. Քոչոյան) և ներկայումս բացված պատկերի միջև կան զգալի տարբերություններ։ Ճշտվել են կողմնային և կենտրոնական նավերի լայնությունները, հետաբար և եռանավի ներքին ծավալատարածական ուսումնասիրությունները։

գ) Բացահայտվել է կառույցի նախնական կավաշեն հատակը և պարզվել, որ կրաշաղախ հատակը վերակառուցման արդյունք է։ Հին և նոր հատակների միջև (տարբերությունը՝ մոտ 20 սմ) գտնվել են կղմինդրների բեկորներ, որոնք նախնական շինության փայտաշեն ծածկին են պատկանել։

դ) Գահավորակի և հարավային պատի միջև ընկած տարածքում բացվել են թաղումներ։ Նախորդ տարիների պեղումներով այդ մասում գտնվել են նաև թևավոր խաչերի բեկորներ։

ե) Շինությունը կառուցվել է IV դարի 30-ական թթ. հետո, ոչ ուշ, քան նույն դարի վերջը, վերակառուցվել է V—VI դդ. և վերջնականապես ավերվել՝ 640 թ. արաբական արշավանքների ժամանակ։

Մեր համոզմամբ սյունազարդ սրահը պաշտամունքային կառույց է՝ եռանավ բազիլիկ եկեղեցիների վաղագույն օրինակներից մեկը։ Այդ են վկայում հետևյալ փաստերը և դատողությունները.

ա) սրահը առանձին, միայնակ կանգնած կառույց է, և ունի պաշտամունքային կառույցներին հատուկ երկայնական առանցքի արևելք-արևմուտք

կողմնորոշում, որպիսի հանգամանքը բացառում է նրա պալատական համալիր լինելը,

բ) սրահի ներսում կատարված թաղումների փաստը և թեավոր խաչերի առկայությունը,

գ) գահավորակի կամ բեմի առկայությունը սրահի կենտրոնում։ Ճիշտ նույն հատակագծով և նույն տեղադրությամբ բեմերը լայն տարածում են ունեցել վաղ քրիստոնեական ասորական միանավ և եռանավ բազիլիկներում (Սինհար՝ IV դարի կես, Քիրքբիզե՝ IV դար, Բրադի Ս. Հուլիանոս եկեղեցի՝ 399—402 թթ., Քֆեիր՝ V դար, Քալբ-լուզե՝ V դարի վերջ և ուրիշներ)[25] և ծառայել են կրոնական արարողությունների[26] (աղ. II, 3)։

Այսպիսով, Դվինի միջնաբերդի եռանավ բազիլիկը հայ քրիստոնեական



Նկ. 2

պաշտամունքային ճարտարապետության եզակի նմուշներից է, հայ-ասորական ճարտարապետական փոխհարաբերությունների արդյունք։ Մշակութային, քաղաքական և հոգևոր կապերը Ասորիքի հետ վաղ միջնադարում բավականին զգալի են եղել, որի մասին բազմիցս նշվել է մեր հին պատմագրության մեջ և ժամանակակից ուսումնասիրողների կողմից (Ն. Մառ, Ն. Տոկարսկի, Ա. Յակոբսոն և ուրիշներ)։

---

[25] G. Tchalenko. Villages antiques de la Syrie du Nord. Le massif du Bélus a l'epoque Romaine. II, Paris, 1953, IX, 1, X, 1, XI, 1—3, 6.

[26] Н. М. Токарский. Закономерности развития средневековой архитектуры. Л., 1985, с. 35.

Դվինը հայտնի է իր աշխարհիկ մոնումենտալ կառույցներով, որոնց թվին է պատկանում Կաթողիկեից հարավ-արմուտք գտնվող պալատը[27] (նկ. 2)։ Նրա հատակագծային հորինվածքի կենտրոնը սյունազարդ դահլիճն է, որը մուտքերով կապված է բնակելի և տնտեսական կից սենյակների հետ (նկ. 3)։ Կառույցի պատերը շարված են ճեղքված սպիտակ ավազաքարից և ունեն կավե սվաղ։ Ըստ պեղումներով կատարված ստույգ շերտագրության, ս.յն հիմնադրվել է V դարի II կեսին։ Հնագիտական և մատենագիտական



Նկ. 3

նյութերի համադրությամբ կարելի է վերարտադրել պալատի շուրջ մեկդարյա գոյատևման հստակ պատկերը։ Նրա կառուցումը Կաթողիկե տաճարի մոտ առնչվում է, հավանաբար, կաթողիկոսական կենտրոնը Դվին տեղափոխելու հետ, որ տեղի է ունեցել V դարի 60—70-ական թթ.։ Հետևաբար, կարելի է ենթադրել, որ ներկայացվող պալատը Դվինի կաթողիկոսարանի նախնական շինությունն է։ Պալատը հետագայում էական փոփոխություններ չի կրել, եթե նկատի չունենանք նրա արևմտյան թևում կրակապաշտական մեհյանի կառուցման փաստը[28]։ Որոշակի նկատելի է երկու ժամանակաշրջանների միջև հատակների մակարդակների տարբերությունը։ Պալատը ավերվել է հրդեհի հետևանքով և հետագայում ծածկվել ավելի ուշ կառույցների տուֆի տաշվածքից առաջացած թափոնների հաստ շերտով։ Համադրելով պեղումներով բացահայտված այս իրավիճակը գրավոր վկայությունների հետ, կարելի է վերականգնել պատմական հետևյալ պատկերը։ 564 թ. Դվինում մարզպան է նշանակվում ազգությամբ պարսիկ Սուրեն անունով մի անձնավորություն, որը հայտնի էր նաև իր կրոնական անհանդուրժողականությամբ։ Պարսիկները խլում են պալատը կաթողիկոսից և վերածում պարսից պաշտոնյայի նստոցի՝ նրա արևմտյան մասում կառուցելով մեհյան։ 572 թ. ապստամբության ժամանակ հայերը Վարդան Մամիկոնյանի գլխավորությամբ հարձակվում են Դվինի վրա և քանդում մեհյանը, այրելով նաև պալատը։ VII դարի սկզբում, երբ վերակառուցվում է պարսիկների կողմից քանդված Կաթողիկեն, նոր պալատ է կառուցվում եկեղեցուց հյուսիս, իսկ հինը որպես պղծված վայր լքվում է։ Նոր պալատը պեղվել է 1937—1938 թթ. և մանրամասն ուսումնասիրվել ու հրատարակվել բաղմիցս (Վ. Հարություն-

---

27 Арам Калантарян. Новые материалы о дворцах раннесредневековой Армении. Доклад на II межд. симпозиуме по арм. искусству. Ереван, 1978.

28 Արամ Քալանթարյան. Դվինի 1980 թ. պեղումների հիմնական արդյունքները.—«Վրաբեր հասարակական գիտություններից», 1982, № 12, էջ 92—93։

յան, Կ. Ղաֆադարյան, Ն. Տոկարսկի, Հ. Խալփախչյան, Ս. Մնացականյան և այլք)։ Տիրապետող է եղել այն կարծիքը, որ պալատն ունեցել է կենտրոնական ուղղանկյուն սյունազարդ դահլիճ՝ 4 զույգ սյուներով, որոնք ավարտվել են արմավենազարդ խոյակներով, իսկ դահլիճի հյուսիսային և հարավային մասերում եղել են հինգական սենյակներ (աղ. III, 1)։ 1987 թ. հուշարձանի բարեկարգման և կոնսերվացման նախագծային աշխատանքների կապակցությամբ կատարված լրացուցիչ պեղումները նոր նյութեր ընձեռեցին պալատի հատակագծի և ծավալատարածական կառուցվածքի վերաբերյալ։ Ստույգ պարզվել է, որ կենտրոնական դահլիճը ոչ թե ուղղանկյուն սրահ



Աղ. III

է եղել, այլ ունեցել է խաչաձև հատակագիծ (աղ. III, 2, նկ. 4), նորույթ է ընդհանրապես հայկական պալատական կառուցվածքների համար։ Հետագայում պալատը կրել է հատակագծային և ծավալատարածական վերափոխումներ, որոնք դեռևս ուսումնասիրման ընթացքում են և կհրատարակվեն առանձին (աղ. III, 3)։

Պալատի թվագրման հարցում կան հակասական կարծիքներ. Կ. Ղաֆադարյանը, Վ. Հարությունյանը, Հ. Խալփախչյանը և ուրիշներ այն համարում են V—VI դդ. կառույց, առաջին հերթին այն կապելով վաղ վկայությունների և կաթողիկոսարանը Դվին տեղափոխելու փաստի հետ[29]։ Ն. Տոկարսկին, որը

29 Կ. Ղաֆադարյան. նշվ. աշխ., I, էջ 118։ Վ. Հարությունյան. նշվ. աշխ.,

տալիս է սեր կարծիքով անհամոզիչ վերակազմություն և չի ընդունում այն կաթողիկոսարան լինելու փաստը, հուշարձանը թվագրում է VII դարով՝ ելնելով ճարտարապետական հարդարանքի բնույթից և Արուճի պալատի հետ ունեցած նրա նմանությունից[30]։ Դվինի պալատը VII դարով է թվագրում նաև



Նկ. 4

Ս. Մնացականյանը։ Նա գտնում է, որ այն արաբների կողմից քանդվելուց հետո վերակառուցել է 643—648 թթ. Ներսես Տայեցին[31]։ Մեր համոզմամբ, պալատը հիմնադրվել է կաթողիկեի վերականգնման ժամանակ VII դարի առաջին երկու տասնամյակների ընթացքում։ Այս եզրակացության համար հիմք են ծառայում նաև հնագիտական հետևյալ դիտողություններն ու փաստարկները.

1. Պալատի հյուսիս-արևելյան մասում կատարված հետախուզական պեղումները բացահայտել են տնտեսական ինչ-որ շինության մնացորդներ՝ V—VI դդ. բնորոշ կարասների շարքով, որոնցից մեկի խուփի վրա փորագրված էր «Գրիգոր» անունը։ Պալատի պատերը կառուցվել են ավելի ուշ և դրվել են անմիջապես այդ շինության ավերակների վրա։

2. Դվինի IV—V դդ. շինությունները կառուցված են գերազանցապես սպիտակ ավազաքարով։ VI դարից և հատկապես VII դարում զանգվածաբար

էջ 57—58։ О. Х. Халпахчьян. Указ. соч., с. 93; Марио Д' Онофрио. Несколько армянских дворцов V—VII веков. Доклад на II межд. симпозиуме по арм. искусству. Ереван, 1978, с. 5:

30 Н. М. Токарский. Указ. соч., с 61.

31 Ս. Խ. Մնացականյան. նշվ. աշխ., էջ 222—225։ 1937—39 թթ., Դվինի արշավախմբի պետ Ս. Վ. Տեր-Ավետիսյանը ուղղակի նշում է, որ «Կաթողիկոսի տունը... մի քանի տվյալներով պատկանում է VII դարի առաջին կեսին։ Տե՛ս С. В. Тер-Аветисян. Двин, его история и раскопки в 1937—1939 гг. Ереван, 1939. (рукопись) Архив ГИМА, № 29, с 10:

օգտագործվում է բազմերանգ տուֆը։ Այդ օրինաչափությունը պարզորոշ երևվում է Կաթողիկե տաճարի վրա։ Այստեղ VII դարում ավազաքարը փոխարինվել է նույն տուֆով, ինչ հանդիպում է կաթողիկոսական պալատում։

3. VII դարում վերականգնված եկեղեցու քարերի վրա հանդիպող վարպետի նշանները կրկնվում են նաև պալատի արևմտյան մուտքի շարվածքի վրա, որը ապացույց է այն բանի, որ դրանք կառուցել են միևնույն վարպետները։ Ընդհանրապես, վարպետի նշանները ավելի վաղ կառույցներում իսպառ բացակայում են և միայն VI դարի կեսից են ստանում լայն տարածում։



Նկ. 5

Դվինում, բացի վերոհիշյալ հուշարձաններից, բացվել են վաղմիջնադարյան այլ մոնումենտալ կառույցներ։ Դրանց թվում կարելի է հիշատակել քաղաքի տարածքում գտնվող 36 սյուներով կառույցը, որը եղել է, հավանաբար, քաղաքի գլխավոր շուկան[32]։

Վերջին տարիներս Դվինի միջնաբերդի հարավային պարսպի աշտարակներից մեկի մոտ, ներսի կողմից նրան կից, բացվում է կրաշաղախ պատերով

32 Կ. Ղաֆադարյան, նշվ. աշխ., I, էջ 106—108, նկ. 84—85։

և կրածեփ սվաղով մի սեծ շինություն։ Նրա 2,5 մ հաստությամբ պատերի պահպանված մասերի բարձրությունը անցնում է 5,0 մետրից։ Ըստ շերտագրական ուսումնասիրությունների այն, հավանաբար, կառուցվել է V—VI դդ., ունեցել է վերակառուցման երեք փուլ և վերջնականապես ավերվել է XI դարում (նկ. 5)։

Դվինի վաղմիջնադարյան մոնումենտալ կառույցների մեջ ներկայացրած ժամանակագրությունը և մեկնաբանությունները, որ հիմնավորված են հնագիտական և մատենագրական նյութերի համադրությամբ, կարող են լրացվել և ճշգրտվել ապագա պեղումների ընթացքում։

НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ ХРОНОЛОГИИ РАННЕСРЕДНЕВЕКОВОЙ МОНУМЕНТАЛЬНОЙ АРХИТЕКТУРЫ ДВИНА

А. А. КАЛАНТАРЯН, К. К. КАФАДАРЯН

Резюме

Для исследования раннесредневековой архитектуры Армении особое значение имеют культовые и гражданские монументальные постройки Двина—столицы, крупного административного, хозяйственного и культового центра страны. В статье по итогам раскопок и наблюдений последних лет заново интерпретируется и датируется ряд памятников. 1. Кафедральный собор, построен в IV—V вв. Первоначально он был трехнефной базиликой, в 70—80-х гг. V в. перестроен, сделана внешняя галерея, в нач. VII в. при новой реконструкции превратился в центрально-купольное сооружение. Здание разрушилось во время землетрясения 849 г. 2. Однонефная базилика, построена в V в. 3. Трехнефная базилика IV в. в цитадели. Первоначально считалась тронным залом Аршакидов. В V—VI вв. церковь претерпела ряд изменений. Выявленные раскопками новые материалы позволяют предложить существенно новую реконструкцию здания. 4. Дворец католикоса V в., построен в 70—80-х гг., уничтожен в 571/72 г. 5. Дворец католикоса VII в, построен во время последней перестройки кафедрального собора. Раскопки 1987 г. показали, что дворец первоначально имел крестообразный зал с четырьмя угловыми комнатами. В последующие века дворец претерпел ряд изменений, которые четко прослеживаются на памятнике. 6. В цитадели, в районе южной башни крепостной стены, раскапывается монументальное раннесредневековое сооружение.